երկուորեակ քաղքին աղքատներուն 300 ֆիօ- րին. — աղքատները հոգացող կանանց ընկե- րութեանը՝ 200 ֆիօրին. — Պէշտի քաղաքային հիւանդանոցին եւ Բուդայի ողորմած եղբարց հիւանդանոցին 300 ֆիօրին։ — Պէշտի՝ տղոց հիւանդանոցին, անկողնոյ մը հիմնարկութեանը համար 1.050 ֆիօրին։

Ցերութեան ու ազգային գիտութեան եւ գեղարուեստից յառաջացմանը համար Թողուց՝ հունգարական գիտութեան ճեմարանին 1.000 ֆիօրին. — ազգային Թատեր առճկաւորաց հիմ- նարկութեանը 100 ֆիօրին, — բնական գի- տութեանց ընկերութեանը՝ 200 ֆիօրին։

Հունգարական Թագաւորական համալսա- րանին բժշկութեան կաճառին մատենադարա- նին՝ Թողուց իր բոլոր բժշկական ու բնագիտա- կան գործքերը. — անդամազննութեան հիմնար- կութեան՝ Օպերհաուզէրի կոչուած Պարիզեան մանրադէտը։

Իր բարեսրտութիւնը զինք դրդեց, որ աղ- քատցած բժիշկներու օգնութեանն, ինչպէս նաեւ հիւանդ բժշկաց ու վիրաբուժութիւն սոր- վողներուն հոգացողութեանը համար ալ դնէ 400 ֆիօրինի հիմնարկութիւն մը։

Ըս ամէնը՝ գերազանցեց, այն փառաւոր հիմնարկութիւնը, զոր Չառսեան, հայրական խնամքով՝ բժշկական-վիրաբուժական վիճակի պատրաստուող աղքատ սորվողներու օգնու- թեանը համար ըրաւ։ — Ասոր նկատմամբ՝ իր յատուկ ձեռօք գրած խօսքերը կ'ուզեմ յառաջ բերել. "Բժշկութեան մեծարգոյ ուսուցչաց կա- ճառին, ինչպէս նաեւ անոր ամէն մէկ անձին կը յայտնեմ իմ խորին շնորհակալութիւնս՝ իրենց մարեկամական լաւազգածութեանն ու սիրոյն համար, զոր ինծի ցուցընելու բարեհաճեցան։ — Ըս բանս՝ ինծի համարձակութիւն կու տայ հիմակ ալ, որ շատ յարգելի ուսուցչաց ընկերութենէն խնդրեմ, որ Թողուցած մրցաններուն հոգատա- րութիւնն իր վրան առնելու բարեհաճի։

Կը Թողում, վերն ըսուած նպատակին հա- մար 12.000 ֆիօրին, կալուածական ազատա- գրութեան արժէթղթերու մէջ։ Որոնց հինգ առհարիւրեան, այսինքն 600 ֆիօրինը՝ տրուի, առանց կրօնի զանազանութեան՝ չորս, լաւ բա- րոյականութիւն ունեցող՝ փութաջան աղքատ, բժշկութիւն սորվողի. — ու երկու՝ սոյնպիսի յատկութիւն ունեցող՝ վիրաբուժութիւն սոր- վողի։ —

Ըհա աս հայրենասէր անձին, աս մեծ գիտնականին, աս բարեպաշտ մարդուն վերջին կամքին ամէնէն նշանաւոր կէտերը՝ ան ժառան- գութեան նկատմամբ, զոր իր աշխատասիրու- թեամբ իբրեւ գործունեայ եւ աշխատասէր բժիշկ՝ արդարութեամբ վաստըկեցաւ։ Ու որուն համար ամենայն համարձակութեամբ կրնանք ըսել, թէ. "Ստացաւ վշտակրողներէն ու աղ- քատներէն — եւ Թողուց՝ մեծաւ մասամբ վշտակրեալներուն ու միանգամայն աղքատնե- րուն։"

ՅՈՎՀ. ԱՆԾԻ

ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊ· ՍԱՌԱՖԵԱՆ[1]

Ցետագայ կենսագրականը Սառաֆեան Սարգիս Արքեպիսկոպոսին է, որ նախ Կեսարիոյ կաթողիկոսական փոխանորդ եղած է։ Իր աշակերտը Տ. Յովհաննէս Վ. Նուրտին, օգնական Լիվոռնոյի Ս. Գրիգոր Լու- սաւորիչ Եկեղեցւոյ[2] ժողովրդապետին՝ Հ. Կա- րապետ Հալաճեանի, Ընտոնեան Միաբանու- թենէ. 1789ին գրած է յանգաւոր չափով անոր կենաց պատմութիւնը, որուն բնագիրը կը գտնուի վերոյիշեալ Միաբանութեան Օրթա- քէօյի վանաց դիւանը, ի Կ. Պոլիս։ Ստորագրողս կը փութայ հրատարակութեան տալ զայն օգտա- շատ համդիսիս միջոցաւ՝ ոչ այնքան երգողին գրական ճարտարութեան, որքան անոր գիւցազ-

---

[1] Մեր Մեծարգոյ Վ. Հ. Գրիգորիս Վ. Գալէմքեարեանի յանձնարարութեամբը՝ Գեր. Հ. Սրապեան իրենց մատենադարանի ձեռագիր օրինակէն ընդօրինակած ու մեզի ղրկած է հրատարակութեան համար կենսագրութիւնը Սարգիս Արքեպիսկոպոսի Սառաֆ օղլու, որ ժամանակին նշանաւոր անձնաւորութիւններէն է: Գեր. Հ. Գալէմքեարեան հրատարակութեանս վերջը պիտի կցէ՝ իբր յաւելուած, ուսումնասիրութիւն մը Սարգիս Արքեպիսկոպոսին մասին: ԽՄԲ.

[2] Այս Եկեղեցին թէեւ Ս. Գրիգոր Լուսաւորչի նուիրուած է, բայց Աւագ խորանի պատկերը Քրիստոսի խաչելութիւն է, որուն համար Հալաճեան իր յիշատակագրու- թեան մէջ կ'ըսէ. — Հրաշագործ եւ ճարտար գրչի արդիւնք է, եւ իբր 150 տարի առաջ Լիվոռնոյի Sant' Uomo Buono խափանեալ Եկեղեցւոյ հնագոյն որմին վրայ նկարուած։ Եւ երբ 1786ին նոր շինութեանց պատճառաւ ծեփով ծածկուելու վրայ էր, արուեստով մը ամբողջապէս տեղէն հանել տալով՝ թափօրիւ փոխադրեցինք զայն մեր Ազգային Եկեղեցին ի 23 Մարտի եւ ի 28 ժամուն բազմութիւ ջեր- մեռանդ եւ օտարազգի ժողովրդով, որ մինչեւ վերջն եւ վառած մոմ ի ձեռին չկարացինք երբեք այս թափօրին հետեւելու, սակայն առանց եկեղեցական երգեցողութեան, ժամանակին յեղափոխութիւններէն ծագած սարսափին երկիւղէն։ — Այս պատկերը վերջէն Ա. Նապոլէոնի արշաւա- նաց ատեն յիշեալ եկեղեցւոյն մատուցած ծառայութեանց համար՝ յատուկ արձանագրութեամբ նուիրուեցաւ Մի- քայէլ Սառաֆ վեհապանծ անձին, Ա. տեղակալ Լիվոռնոյի կամաւոր օրարդ զինուորաց Թագաւորական գնդին։

digitised by A.R.A.R.@

նոյն նշանաւորութեան, եւ իր մէջ բովանդակելուն համար ազգային պատմական ծանօթութիւններ, թէեւ կարի սխալ:

Հ. Ի. Ս. – Մ. Ա.

---

## ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

Որ ճառէ զծնունդ, զուխ մանկութեան
Զաշխարհի կենցաղ պատանեկութեան
Մեծան համբակ Սարգսի առ բարունն Յոհան
Որ Պատրիարքն էր Հայոց Բիւզանդեան:

1 Արդ էր Սարգիս որդի սիրուն,
Առն համեստ եւ գովանւոյն,
Ուղղափառաւ Սառաֆ բարւոյն
Ալեքսանի պերճ Ակնցւոյն:

2 Ուստի եառ Սարգիս բարուն
ԸզՍառաֆեան զիւր մականուն,
Որ եւ իսկ էր Սառաֆ ներհուն
Ի ճանաչել զքարս մարգոյն:

3 Իսկ Թագուհի ունէր անուն
Մայր իւր պարկեշտ եւ բարեսուն,
Որ էր ծնունդ Հռովմայ նորոյն
Դուստր ծնողաց բարեանուն:

4 Սոյն երկուքին միմեանց հանդոյն,
Ըստ հաճութեան կոչման Վերնոյն,
Ամուսնանան մին ընդ միւսոյն 1898
Ի Կոստանդեան Պօլիս փայլուն:

5 Յոր յղացեալ նոյն Թագուհւոյն
Երթայր անտի արամբն իւրոյն
Ի ծոխ Պօլիս Անդրիանուն
Ի սակս իւրեանց մեծ ինչ գործոյն:

6 Անդ կայր յայնժամ արքունեաց տուն,
Մեծամեծաց եւ Տեարց համբուն,
Իբր առ մարտի Դ°րան Օսմանցւոյն
Ընդդէմ Կայսեր Գերմանացւոյն:

7 Ուր եւ ապա հասեալ ժամուն՝
Նա ծնանէր զիւր փաղփաչուն,
Կայտառ, զուարթ փունջ ոսկեգոյն
Մատաղ մանուկ ազնուագոյն:

8 Այս ինչ լինէր ի մէջ ամսոյն
Փետրուարի այնր տարւոյն,
Որ վերջինն էր անցեալ դարուն
Յառաջաւոր կոչեալ պատուն:

9 Զոր մկրտեն յոր շաբաթուն,
Յոր Սուրբ Սարգիս Զօրավարոյն
Տօն, յիշատակ եւ ցնծութիւն
Կատարէ միշտ Հայոց Սուրբ տուն:

10 Որ եւ գրոշմեալ միահաղոյն
Ըստ մեր ծիսի յոյժ հնագոյն
Ի 'արքեպեան Եկեղեցւոյն՝
Առնոյր անդրէն Սարգիս անուն:

Ապա անտի դառնան իսկոյն 11
Ի Բիւզանդեայ իւրեանց իսկ տուն,
Ուր զարգացեալ հասակ նորուն
Աճէր ծնողացն ուրախութիւն:

Եւ պատճառ սնանելոյն 12
Ի նոյն քաղաք մեծ եւ զարդուն,
Առնոյր Սարգիս մեր զուարթուն
Բիւզանդացի միւս մականուն:

Ի մեծանալ անդէն մանկան, 13
Ծնողքն առ վարժել զայն յընթերցման,
Ի 'ի սուրբ հաւատ Քրիստոսեան,
Յանձնեալ միում երիցու տան:

Ուսեալ նորա գայբբենարան, 14
Ըզգիր, սաղմոս, կոտակարան,
Ըզժամագիրք եւ Շարական
Երգէր յաճախ ի ժամատան:

Մինչ չափահասն էր բաւական, 15
Արթեալ յարուեստ Ոսկերչութեան,
Կայր ի կրպակ առեւտրութեան
Ոսկեղինաց գոհարական:

Սակայն հակումն իւր բնական 16
Միտէր ըղձեալ շաւղաց ուսման,
Աստուածաշունչ գրոց համայն
Եւ գիտութեանց արտաքնական:

Ուստի սիրովն եռանդական, 17
Եւ բաղձանօքն յօժարական
Երթայր առէպ յաղօթարան
Առ լսել անդ զԱստուծոյ բան:

Ի քարոզիչ բարբառս Հայոց՝ 18
Յոյժ տեղեակ էր յայնժամ գրոց
Պատրիարքն Հայկայ որդւոց
Ի քաղաքին Բիւզանդացւոց,

Որ էր տեղեաւ Բաղիշեցի 19
Կոչեալ անուամբ Յովհաննիսի
Որ եւ Կօլոտ մականուանի
Քաջաքարոզ մեծ բարբանի:

Սա բատացեալ էր ի մերոց 20
Աղքանաղեան պերճ ծննդոց
Զոմանս համբակս սիրօղ գրոց
Զորս քաջ մարզէր յիւր իսկ դպրոց:

Յակն արկանելն Սարգսի զորոց 21
Յառաջանալն ի դասս գիտնոց,
Փայլէր յինքեան իբր ի հնոց
Իմաստութեան սուրբ սիրոյն բոց:

Վասն այն յաւէտ հանէր յոգւոց 22
Ուսումնատենչ սրտին խորոց
Առ գոլ ինքն իսկ ի շար թուոց
Առ ոտս վեհին հրահանգելոց:

digitised by A.R.A.R.@

23 Իսկ Հայրն առ այս կանգնէր խորոց,
Զի եզակն էր յարու որդւոց,
Անակնկալ հարուածոյս խոց
Մաշէր Սարգսի զաղխս եւ ծոց։

24 Այս տեսեալ Նորուն ծնողաց,
Թէ չէր հնար հանել ի բաց
Յոգւոյ Նորին եւ ի մտաց
Զայն քաջ խորհուրդ ճահ գովանաց։

25 Նաեւ ազդեալ իբր ի բարձանց՝
Զընդդիմանալ Նորին կամաց,
Ի 'Երկնից կոչման տնօրինմանց,
Ցուցին յայն փոյթ զ°հաճոյս իւրեանց։

26 Յայնժամ Սարգիս սիրող բարեաց,
Ոչ հետեւող չար ընկերաց,
Եւ պատանի յոյժ մաքրակեաց,
Էր հասակաւ քսան ամաց։

27 Որ յեօթնեքին աստիճանաց
Եկեղեցւոյ ուխտի մանկանց
Վաղ իսկ ըզչորս, ըստ տիրացուաց,
Ընկալեալ էր ընդ այլ դպրաց

28 Եւ արդ լքեալ Նորուն ձեռաց
Զոսկի, զարծաթ, կոյտ գոհարաց
Զ°վաճառ, հանուրթ փարթամ արդեանց,
Զողջ վաճառեալ ի դրամ փոխեաց։

29 Զորոյ ըզկէսն հօր իւր յանձնեաց,
Զի ի Նմանէ էր ընկալած,
Զերթ մայր դրամոց իւր վաճառաց,
Միւս կէսն ինքեան վաստակ մընաց։

30 Յետոյ առէր յոյժ համարձակ,
Իբր առնելով զիւր բուն կտակ,
Մնասջիկք բարեաւ առհասարակ
Ով սիրելիք իմ անքատակ։

31 Զի Թէպէտ եմ մեծահասակ,
Այլ յարեմ զիս մանկան գունակ
Ի Նորավարժ համբակաց կարգ,
Զորս արդ մարզէ մեր Պատրիարգ։

32 Թողեալ ահա զերկրի վաստակ,
Զ°հայր, մայր եւ տուն, վաճառ, կրպակ
Ցանկամ լինել գրոց համբակ,
Որոց շահն է գանձ անքանակ։

33 Ճեմեալ ուղիղ առաջ շարունակ՝
Ըղձամ ջանիւ գոլ հետեւակ,
Ցարդ ըմպողաց զԲանին բաժակ,
Թէեւ չեմ այժմ բաւ ընդունակ։

34 Այս լսեալ սրտին փափագ՝
Գրկէր հապճեպ զիւր նոր վիճակ,
Որում բաղում էր ժամանակ,
Յօրմէ հետէ բաղձայր անյագ։

## ԽՐԳ ԵՐԿՐՈՐԴ

Որ պատմէ Սարգսի յուսման կրթութիւն,
Սարկաւագութիւն, Քահանայութիւն,
Վարդապետութիւն, Առաջնորդութիւն
Ի 'սա Էջմիածին զուգեւորութիւն։

Սարգիս մեր ահա սիրով կամովին 1
Աշակերտ եղեալ Յօհաննու մեծին,
Կոստանդնուպոլսոյ քաջ Պատրիարգին,
Լնոյր առ Նա միշտ զըղձանս իւր սրտին։

Որ եւ հանապազ եւ յօժարովին 2
Աշխատասիրեալ ըստ կարի անձին,
Ի պահ տըւընջեան եւս ի գիշերին,
Հետեւէր ըղձիւ ուսման իմաստին։

Եւ ըստ տըւչութեան Հոգւոյ անեղին, 3
Ուսանէր Նա անդ ողջ բոլորովին,
Ըզպիտանացուն Նաեւ զարժանին,
Ի սակս որոշեալ Նորոգ վիճակին։

Այս գիտելով ժիր վարդապետին. 4
Ըզյառաջանալն իւր աշակերտին,
Լինէր բերկրալից յիւրում իսկ սրտին,
Ցնծութեամբ կարի եւ անհնարին։

Վասն որոյ ջանիւ իւրով գլխովին, 5
Թէ յեկեղեցւոջ եւ թէ առանին,
Հ°րահանգեալ մարզէր ի յուսմունս Նրբին,
Ըզհամբակութիւն Սարգսի անվարժին։

Առ սոս այնպիսի քաջ վարդապետին, 6
Ի յընթացս ամաց երից ւ 'աւելի,
Գէտ հանդիսացեալ Սարգիս ըստ կարի,
Անցեալ զանցանէր զընկերս իւր դասի։

Որոյ տըւագաւ ձեռնադրեալ լինի 7
Ի քսաներորդ երրորդի ամի 1722
Պատանեկութեան իւրոյ հասակին,
Կիսասարկաւագ Սարկաւագ արհի։

Այս իբր երից ամաց ըզկնի, 8
Յետ ճիշդ քննութեան իւր վարդապետի,
Ի 'այլոց իմաստից Նորին գպրոցի,
Արժանի գտեալ քահանայ օրհնի։ 1725

Եւ ի Նոյն աւուր ի յերեկոյի 9
Ընկալեալ վեղար Սրբոյն Անտոնի
Ըստ ծիսի Ազգիս կրօնաւորի,
Մտեալ ընդ լծով վանական կարգի։

Շնորհ աւուր օծման մաքուր Միւռոնի 10
Քահանայագործ աւուր պատարագի
Ի՛ ընկալման որբոյ Հոգւոյն պարգեւի
Գործէր զնա միշտ ընտիր եւ բարի։

Այնուհետեւ Նա բաղմաշխատ աքնէր, 11
Ոգւով չափ ճգնեալ եւ եւս հետէր,
Տեսական ուսման որ զԱստուծոյ էր,
Եւ որ քարոզչաց յոյժ հարկաւորն էր։

digitised by A.R.A.R.@

12 Յաստուածաբանից մատեանս թափանցէր,
Մեծ ուշադրութեամբ անդէն դադարէր,
Կարծեաց մեկնութեանց նոցուն հաւանէր
Թէ յեկեղեցւոյ այնպէս վճռեալն էր։

13 Ընդ նմին եւ զայլ գիտութիւնս փորձէր,
Ատենաբանից նմանիլ ձկտէր,
Զիմաստասիրաց քաջ առած ընտրէր,
Զորոց բան խրթին հանճարով մեկնէր։

14 Սոյնպէս հրահանգեալ Սոփեստ երեւէր,
Յաչս մի մի մարդոյ որ ընդ նա գիտէր,
Որոց բերան իսկ ընդ նա գրուատէր,
Յականջս ամբոխին հռչակ հարկանէր։

15 Յայնժամ Պատրիարգն որ վարդապետն էր,
Զաշակերտն իւր զոր քաջ մարզեալն էր,
Համայն քննութեամբ եւ հարցմամբ փորձէր,
Վարդապետութեան արժան գտանէր։

16 Վասն որոյ ըզհետ մի տարւոյ իբրու
Մի ըզհետ միոյ Սարգիս մեր հասու
Փոքր եւ ծայրագոյն գաւազան առնու,
Ի վարդապետէն իւրմէ Յօհաննու։

17 Որ եւ իսկ եւ իսկ ըզտեղի կալնու,
Յատեան քարոզչաց Կոստանդնուպօլսոյ,
Անզոյգ հանճարով եւ բանիւ ազդու
'Ի իւր ճարտար լեզուաւ լինի խրատտու։

18 Նա մոլասիրաց էր ազդիչ ձայնտու,
Եւ առաքինեաց ներբողիչ լեզու,
Ուղղասէր անձանց յաջող ձեռնատու,
Աղանդաւորաց փաստիւ ահարկու։

19 Քանզի ուսեալն էր բարւոք առաջնու,
Վստահ բարբառիլ ոչ գոլ ակնառու,
Սրտեղ գոյանալ եւ ոչ ակնածու,
Սաստ վատաց լինել լաւաց հոգածու։

20 Յաղագս այսպիսի հանճարոյն զարդու
Անդէն առ նմին պատիւ ընկալնու,
Ի մեծամեծաց ի գիտնոց դասու
Եւ առ հասարակ ի ռամկաց պարու։

21 Երբ անուն Սարգսի գովեստ ըստացաւ,
Որ քան զօր յաւէտ հռչակն յորդեցաւ,
Սակայն առաւել նոյն բարի համբաւ
Ըզկեսարացիս հապճեպ շահեցաւ։

22 Զայնու պահօք իսկ լուր տարածեցաւ,
Այս ճշմարիտ պատգամ ծանուցաւ,
Թէ Կեսարիոյ առաջնորդն հանգեաւ
Հայ եկեղեցին անդր այրիացաւ։

23 Յայնժամ Կեսարեան ժողով որ գտաւ,
Ի Բիւզանդիայ չէն քաջահամբաւ
Իւր քաղաքակցաց շարժիչ պատգամաւ
Եկն առ Յօհաննէս Պատրիարգ գնդաւ։

Յորմէ Սարգիս մեր վարդապետըն լաւ 24
Յեղելոց անդրը աղերսիւ բազմաւ
Կարի ստիպմամբ մեծ աղաղակաւ
Յառաջնորդութիւն իւրեանց խնդրեցաւ։

Այլ մեծն Յօհաննէս իմ հոգեւոր հաւ 25
Պարապեալ գոլով ըզբաղմամբ ամբաւ
Կարգեալ էր ընդ նա փոխան իւր կամաւ
Ի քարոզել անդ բանիւ ճարտարաւ։

Ուստի բացասէր որոշեալ բանիւ 26
Ողջ Կեսարացի Հայոց բազմաթիւ,
Յայտնելով նոցա ըղկամս իւր փաստիւ
Ընտրեցէք առէր ձեզ զայլ ի հովիւ։

Բայց Կեսարացիք դառնացեալ սրտիւ 27
Շէշտ ի դուրս ելեալ անտի անհաճիւ
Թղթով առ Գրիգոր դիմեն աղերսիւ,
Որ Պատրիարգն էր շինին սուրբ ւ' ազնիւ։

Զոր աղաչէին շատ պաղատանօք 28
Հաճել զՅօհաննու միտսըն պատգամօք,
Տալ ինքեանց զ°Սարգիս գովեալն համբաւօք
Առաջնորդ հովիւ արքունեաց թղթօք։

Որոյ նշմարեալ զայնց ըղձից բորբոք, 29
Որ կարէր զաղերս փոխել ի բողոք,
Օրհնաւաք թղթով լի բանիւ ամոք
Խոստանայր նոցա յանդել զայն ողոք։

Եւ°ս ի նոյն պահու ձիգ յորդորանօք 30
Դիւրէր զՅովհաննէս Պատրիարգ տոմսօք,
Շահիլ Կեսարեան սրտառուչ կամօք
Տալով այնց զ°Սարգիս ի հովիւ փառօք։

Յայնժամ Յօհաննէս որ սիրէր տենչօք 31
Ըզմեծն Գրիգոր պատուեալն յարգանօք,
Յորոց չ°նորհ զիջեալ կամակար մըտօք
Կատարէր նոցուն խնդիր իւր սարօք։

Այն է անուանէր զ°Սարգիս ընտրանօք 1730 32
Հօտին Կեսարու Հովիւ պերճ բազմօք,
Հաստեալ յայնմ ըզնա կարեւոր կարեօք
Արքունի դրան հրովարտակօք։

Ապա կացեալ նա անդր եւ եւս ամսօք 33
Վասըն լինելոյն լի զբաղանօք,
Բայց յետոյ անտի մեծ հանդերձանօք
Երթայր ի Մաժակ բազում ուղեկցօք։

Որոց մինն էր իւր աշակերտակից, 34
Յակոբ վարդապետ Նալեան զ°գօնալից
Որ եղեւ յետոյ Պատրիարգ գահից
Երուսաղիմայ Բիւզանդի°ոյ շինից։

Ժամանեալ ողջամբ Սարգիս շ°նորհալից 35
Ի Կեսարիայ, քաղաք մարդալից, 1731
Ընդունիւր անդէն փառօք պատուալից
Յաշխարհականաց ւ' ի քահանայից։

digitised by A.R.A.R.@

36 Որում եւ Յակոբ եղեալ յարգակից,
Որ յամայր աւուրս յար սեղանակից,
Լինէր ընդ Նմա անդ ուրախակից,
Որպէս հարազատ եւ մեծ դասակից։

37 Ապա յետ ամաց Յակոբ վարդապետ
Հրաժարեալ անտի գոհութեամբ յաւէտ
Ի Բիւզանդիոյ առ իւր աւագ պետ
Դառնայր իւրայօք կալեալ ըզնոյն հետ։

38 Արդ Սարգիս հասեալ հովուէր զիւր հօտ ծիւր
Ճարակեալ յառատ հովիտս եւ աղբիւր,
Ցածեալ ըստ հոգւոյ ճգամբ մտադիւր
Վարդապետութեամբ ողջամիտ եւ դիւր։

39 Ի կեսարացւոց այր իւրաքանչիւր
Զառաջնորդըն նոր ի յարգել շարժիւր,
Զոր ի ներբողել դրուատիւ ձկտիւր,
Ցամենայն ուստեք լեզու բազմ հարիւր։

40 Այսու առհաւատիկ նա յաջորդ լինիւր
Ղեւոնդի, Բարսղի սրբոց շնորհատուր,
Յորոց մեծ աթոռ ժառանգեալ նստիւր,
Հայրապետական պատուով հռչակիւր։

41 Յետ տնտեսելոյ շնորհիւ երկնատուր
Ըզմայրաքաղաքն եւ զայլ չէն անձնիւր
Տրամադրութեամբ յամենայն աւուր
Հոգածեալ կարգէր զանուանի վանք իւր։

42 Վանքն այն վաղեմի էր տապան ամուր
Սուրբ Կարապետի նշխարաց մաքուր,
Յորոց Սուրբ Գրիգոր Ազգիւ լուսատուր
Ընդ այլ նշխարաց ըզմասն ինչ առնոյր։

43 Յաւուրսն յայնոսիկ նոյն սուրբ ուխտ նեղիւր.
Ի ներքոյ պարտուց որ էր իբրու բիւր,
Զոր փրկել անտի նախորդք իւր ի զուր
Ջանացեալ էին տարազու անդիւր։

44 Նմին իրի նա լեալ զերթ մարդ անուր
Մեկնեալ ի թեմէն վաղվաղէր յոյլուր,
Ի բառնալ զայն պարտք տորք այլոց յոյժ դիւր
Վշտաց վտանգաց եղեալ անձնատուր։

45 Շրջեալ ասա եւ անդ հասեալ յԱտանայ
Անտի յԱսորիս եւ ի Բերիոյ
Յամենայն ուրեք շուք, տուրս ըստանայ,
Ապա ճոխ արդեամբ յաթոռ իւր դառնայ։

46 Վճարեալ զայն պարտք մտօք դիւրանայր,
Ի Բիւզանդիա շոյտ անդրէն երթայր,
Ի՛ անտի պատրաստեալ ռահ գործել փութայր
Առ Էջմիածին դիմել անպատճառ։

47 Որ եւ տանէր անդ սրկիհ ինչ ոսկեայ
Գեղեցկապաճոյճ եւ անդամանդեայ,
Զոր վարդապետ իւր առաքէր ըլնծայ
Սրբոյ տաճարին գահին Հայկազնեայ։

Ի ճանապարհին նախ ընկերանայ 48
Ընդ Աբրահամու բարւոյն գերակայ,
Որ ծննդեամբն էր ի կղզւոյն Կրետեայ
Դէտ Ռեդեստոնի յաշխարհին Թրակեայ։

Որում Յօհաննէս համօշաւիղ տայր 49
Զաշակերտն իւր՝ զոր առեալ չոգայր
Մինչեւ ի Կարին՝ ուր Սարգիս մընայր,
Ի՛ ինքն յԷջմիածին ուղղորդ յուխտ գընայր։

Սարգիս ի Կարին ամօք յամենայր, 50
Յարգեալ ի Հայոց տեղւոյն անդադար,
Որ անտի ապա չուեալ ընթանայր,
Հասանէր յաթոռ Լուսաւորչարար։

(Շարունակելի։)

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

### "ԵՂԻՇԷԻ ՔՆՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ" ՄԻ ՀԱՏՈՒԱԾԻ ԱՌԹԻՒ

*Հանդիսի յարգոյ Խմբագրութեան։*

Հանդիսի Մայիս թուի մէջ կարդացի Եղիշէի ուսումնասիրութեան մի հատուածը, որի մէջ հեղինակը ակնյայտնի սխալ է գրում. թոյլ տուէք ուղղել այն։ Ահա յօդուածագրի տողերը. — Սխալ է ուրեմն կարծել, թէ Արեւելեան գրեթէ դար մը յետոյ պատահած դէպքերու աղբիւրն եղած ըլլայ։ "Եղիշէի պատմութեան աղբիւր" խորագրով յօդուածի մը մէջ՝ Պ. Գր. Տէր-Պօղոսեան այսպէս կը կարծէ, երբ կ'ըսէ. "Մենք ոչ մի հիմք չունինք ասելու, թէ այդ խօսքերը, որոնք ականատես հեղինակի ժամանակին են վերաբերում, կեղծ են. ընդհակառակն մեզ յայտնի է, որ պատերազմից յետոյ Պարսկաստանի խորքերում եւ 442 թուերին Քուշանաց արշաւանքի ժամանակ կազմած բանակի մէջ կային քահանայներ, որոնցից մէկի մասին յիշւում է որ "համառօտութիւն" է գրել. դա Աբրահամ խոստովանողն է քահանայ աստիճանով" (Հանդէս 1895, Ապրիլ էջ 113)։ Պէտք է գիտել, որ Խոստովանող "Համառօտութիւն" չէր։ Առաջին անգամ Թովման է, որ կը սխալի երբ կ'ըսէ Խոստովանողի համար... եւայլն։ Ծանօթ. Հեղ. — Պատերազմէն յետոյ "442 թուեր" անշուշտ սխալ մ'է պատմական, եթէ տպագրական չէ։ Չենք գիտեր թէ յօդուածագիրն ինչ թիւ կ'ուզէր նշանակել։ Ըստ Եղիշէի ի վեշտասաներորդ ամի տէրութեան... խաղայր գնայր յաշխարհն Քուշանաց մեծաւ

digitised by A.R.A.R.@